



**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

«16» հոկտեմբեր 2023թ.

Հ Ր Ա Մ Ա Ն N 153-ՆԿ

ՇՈՒՇԱՆԻԿ ՍԱՄՎԵԼԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԻՐԱՎԱԲԱՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով և 16-րդ հոդվածի 4-րդ մասով, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով և 20-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1554-Ն որոշման հավելվածի 147-րդ և 151-րդ կետերը, Շուշանիկ Մաթևոսյանի 13.10.2023թ. դիմումը, ինչպես նաև Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի իրավաբանական վարչության գլխավոր իրավաբանի (պաշտոնի ծածկագիր՝ 22-4-24.1-Մ2-2) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 13.10.2023թ. անցկացված մրցույթի հարցազրույցի մասնակցի վերաբերյալ եզրակացությունը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ .

1. Շուշանիկ Սամվելի Մաթևոսյանին 2023 թվականի հոկտեմբերի 17-ից նշանակել Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) իրավաբանական վարչության գլխավոր իրավաբանի (պաշտոնի ծածկագիր՝ 22-4-24.1-Մ2-2) պաշտոնում՝ 9 ամիս փորձաշրջանով:
2. Շուշանիկ Սամվելի Մաթևոսյանի փորձաշրջանը համակարգող նշանակել Կոմիտեի իրավաբանական վարչության պետի տեղակալ (ծածկագիր՝ 22-4-24.3-Ղ5-1) Լիաննա Արտաշեսի Գևորգյանին:
3. Շուշանիկ Սամվելի Մաթևոսյանի պաշտոնային դրույքաչափը սահմանել 267 072 դրամ (երկու հարյուր վաթսուներեք հազար յոթանասուներկու) դրամ՝ համաձայն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի:

??????? ????????

Oct 16 2023 6:33 PM ԵՊ ՄԻՔԱՅԵԼ ԶԱԼԻՆՅԱՆ